

ճանապարհն», կ'ըսէ խորատես պատմիչը, տալով անոր ներքին պատճառն ալ. «Զի ամենայն ոք յանձնիւր տան՝ յիւրաքանչիւր տեղի գօրէն բարոց հայաստան մարդկան անձկացեալ էին». այս ինքն հոն՝ ուր կը սպասէին իրենց զբօսանքներն ու սեղանները. — մինչ դեռ խստամբեր հռովմայեցւոյն «տեղին» մինչեւ հոն էր՝ ուր կը մղէր զինք հայրենասիրութիւնն ու փառքը, եւ ուր կընային հասնիլ զէնքերը: — Արդ՝ նախարարներն ազատելու համար Շապհոյ հրաւերէն, նենգութեամբ գժտութիւն ձգեցին երկու թագաւորաց մէջ, եւ Արշակ զիշերայն զաղտուկ փախաւ գնաց բանակովն ի Հայաստան, այդ օրէն դուռ բանալով երեսնամեայ արիւնալից շրջանի մ'երկու ազգաց մէջ (Փաւս. 130—5): Բայց այդ հեշտակեաց իշխանները գէթ իրենց սերմանած փոթորկին ժուժկալելու քաջութիւնը չունեցան. եւ իրենցմէ շատերը գնացին յարեցան յետոյ թշնամւոյն, Պարսից արքային, ազատելու համար կռուի հարկէն (նոյն, 159—60):

Այս եղաւ մեր ազատանւոյն ընթացքը սկիզբէն մինչեւ վերջ: Դժուարաւ պիտի գտնենք շրջան մը կամ նշանաւոր պատերազմ մը, յորում անոնք համաշունչ եւ համագունդ գտնուին: Շատերը նախա-